407. Ածական անունն (9) աշխարհաբառ լեզուի միջումն՝ միայն յառաջ կ'դնուի, գրաբառի միջումն՝ յառաջ և յետ և. Մեծ ծառ, ծառ մեծ. արդար այր, այր արդար:

408. Հասարակ անուն ածականներն երբոր անմիջապէս գոյականին յառաջ դնուին, սովորաբար չեն համաձայնուիլ նոցա հետ, ոչ հոլովով ոչ թուով. այս ինքն նոցա պէս չեն հոլովուիլ, այլ ուղղական կ'մնան. ինչպէս,

Եզակի	Յոգնակի
Մեծ ծառ.	Մեծ ծառք.
Մեծ ծառոյ.	Մեծ ծառոց.
Մեծ ծառով.	Մեծ ծառովք.
՚ի Մեծ ծառոյ.	՚ի Մեծ ծառոց.
զ Մեծ ծառ.	զ Մեծ ծառս.

Եզակի	Յոգնակի
Արդար այր.	Արդար արք.
Արդարոյ առն.	Արդարոց արանց.
Արդարով արամբ.	Արդարովք արամբք.
Ո՛ Արդարոյ առնէ.	Ո՛ Արդարոյ արանց.
զ Արդար այր.	զ Արդար արս:

409. Այսպէս անհամաձայն կ'դնան շատ տեղ՝ թէ և միջանկեալ բառով հեռացած լինեն գոյականից, որ շատ անգամ կ'լինի.

Երանական պատահեալ վիճակի:
Ընտրոյտ վիճակեալ բնութեան:
Ընաչառն եմք մատնեալ առնի:
Օանդարձն ՚ի չարեաց զմեղաւորէն:
Երկայն կարօտանամք բանից:
Պղծալից իւրեանց շրթամբք:
Բազում ծնանիցին նմա որդիք:
Բազում ունէր ուսուցս:

410. Այց շատ անգամ և կ'համաձայնուին վերջահոլովներին, մանաւանդ հետ ընկածներն, որ աշխարհաբառի միջումն քնաւ չի լինել. ինչպէս,

Եզակի	Յոգնակի
Մեծ ծառ.	Մեծ ծառք.
Մեծի ծառոյ.	Մեծից ծառոց.
Մեծաւ ծառով.	Մեծօք ծառովք.
՚ի Մեծէ ծառոյ.	՚ի Մեծից ծառոց.
զ Մեծ ծառ.	զ Մեծս ծառս:

Եզակի	Յոգնակի
Երդար այր.	Երդար արք.
Երդարոյ առն.	Երդարոց արանց.
Երդարով արամբ.	Երդարովք արամբք.
Յ Երդարոյ առնէ.	Յ Երդարոյ արանց.
զ Երդար այր.	զ Երդար արս:

Ընահիւս՝ ծնունդք է ոչխարին Երամակաց:
Վհուկն և փառասոր Բաղաամ:
Մեծաւն և կոպրելիքն և անձեռնասուրճ խորհուրդն:
Մեծամեծացն և անբաւ խնամոցն:
Ի պղծոյ և ՚ի նուաստ ձայնէ:
Փախուցեալ ՚ի բարկութենէ ողբոյն առաջնորդեաց զբազում:

Երկնաւորին վերակոչեաց Հրամանն աստուած :
Երաշխաւորեաւ պարտ էր անցանել բանէ :
Ի ճնաւկրաց աստի էերմանդ :
Ի պաղպաղան Թագիւ գինքն Եաչնոց :

411 . Ինչպէս տեսար, եթէ մօտիկներն անմիջապէս եւս համաձայնուեն՝ վերջաւորվներվ հետ միայն կ'համաձայնուեն, և ոչ թէ յոգնակի նախդրիւ հոլովներվ, այս ինքն յոգնակի ուղղականի, հայցականի և նախդրիւ տրականի. զի երբ որ անմիջապէս մօտիկ լինեն՝ չի ասուել սովորաբար Աեծ ծառք, արդարք արք, գմեծս ծառս, յարդարս արս :

412 . Բայց հեռի ընկածներին՝ այդ եւս կ'լինի շատ վայել չաբար . ինչպէս ,

Երկու ահեղ ճառաւորեալ աներևոյթ Երեսաւ :
Աեծաձծն և պատուական առեւտ :
Ես այլ եւս եպը-մ որ 'ի սոյն յարին բանի :
Ընձակել 'ի վերայ նոցա նորափորձ լի բարկութեամբ գալստեան անճանաչիս :
Ընտիր ընտրեան և գգեղեցիկ անօրեն տարայք :
Ընտրեցէք վկայեալ 'ի ձէնջ արս եօթն :
Ներս-մա եաչմբերս և գենեբերս 'ինձա տնկեաց հովէտս :
Ի եպը-մա և 'է ղանդղանս բաժանին անառանս և երս :

413 . Գոյական դերանուանց ածականն միշտ պիտի համաձայն դնել հոլովով և թուով . Ալրիպեցելոյս ինձ . փրկեցոյս մեզ . գտարս զմեզ . զկորուսեալս զմեզ . զօտարացեալքս զմեզ (355) :

414 . Բայց չորս թուական անուանքն, ին, երկու, երեք, չորք, և միջակ անուանքն երկոտեան, ամենեքեան, էմ կամ էնչ, որ, ոմն, ոք, և ածական դերանուանքն և դերանուանական ածականներն, եթէ անմիջապէս եւս որ յառաջ դնուեն, ոմանք բաբար կ'համաձայնուեն հոլով և թուով և, շատն նախդրիւ հոլովներվ հետն եւս . ինչպէս, Ամոյ առն, 'ի միում աուր, 'ի միոջէ մարդոյ, երկուց աուրց, երկուս արս, երկուք և երիք վկայիք, 'ի չորից ծագաց, գերկոսին որդիս . ամենեքեան ձերքն, ամենեցուն բնակչաց . առանց երիք միջնորդի, մի իւիք սաստիւք . որով հրով, յորմէ արարչէ ,

որոց անանոց . 'ի չարէ ումեքէ արարչէ, ոմանք արք, զոմանս եղբարս :

Այսր աուր, այդմ շնորհի, այնու օրինակաւ, այնց ժամանակաց . 'է սմին աուր, նովին կամ նովիմբ անուամբ, նոքիմբք պարծանօք :

Ումոյ իմաստութեան, քումդ հրամանի, քով կամ քոյով ձեռամբդ, 'ի քումմէ ձեռանէ . իմոց բանից, 'ի ձերոց ազգականաց . նորայոցն ախտից :

Բայց մի քանի հարկաւոր դիտելիք կան .

415 . Երկու-ն ուղղական, եզակի կ'ասուի Երկու որդիք, երկու արք, երկու պարտապանք . ոչ թէ երկուս որդիք :

416 . Ումիքակ անունն որ՝ նախդրիւ հոլովի մօտ չի համաձայնուել, այլ միայն հեռու, ինչպէս ասէնն . Ալր մատեանքն, զոր օրէնս . որ մեծատունք, զոր չարիս : — Օրս հիւսեցից շարս և տողս բանից : — Ու ամենևին պոյականից յետ չի դնուել :

417 . Այս, այդ, այն, ասյն, պոյն, նոյն, դերանուանց կարճ նախդրիւ հոլովներն մօտիկ չեն բանի կալ . չի ասուել Այնք բանք, զայնս բանս . նոյնք բանք, զնոյնս բանս . այլ կ'ասուի Այնոքիկ բանք, զայնոսիկ բանս, նոքին բանք, զնոսին բանս : Բայց թէ հեռի լինեն, կ'ասուի . Այնտ ոչ էին լեալ յաղաղաքտ . զայնս եւս ամբոխս . զնոյս նկատելով կերպարանս :

Բայց վերջաւորվներն, ինչպէս ասէլինք 'ի 128, սովորաբար կարճէրն յառաջ բանի կ'կան, ձգէրն յետն . Թէպէտ երբեմն ընդ հակառակն եւս կ'լինի . ինչպէս ,

Յայսմանէ տեղւոջէ , այսոցիկ տարակուսանաց, այնոցիկ մարդկան, յայսցանէ 'ի գործոցս : —

Ընդ այդը , ուստիս այսմ, 'ի տանս յայսմ, տեղւոյն այնմ, 'ի տեղւոջն յայնմ, տեղեացն այնց մարդկին, զարան զայնս, յաւուրսն յայնս :

Իսկ ոյն, պոյն, նոյն, ինչպէսնաև ոյր, պոյր, նոյր վերջաւորվքն՝ միշտ յառաջ կ'դնուեն, ամենևին գոյականից յետ չեն դնուել :

418 . Իմ, ին, ոյ, ձեր, ձեր, էր, ոյր, և այլն, դերանուանական ածականներն նախդրիւ հոլովներվ՝ միայն թէ որ

յառաջն դրած և հետի լինեն, և դիմորոշ յօդ ունենան՝ կ'համաձայնուեն. Աչ գիւրն խրատելով որդիս. զբոյն խոհեր: Ոչխարքն գալոց են տպգ: Նայց մտիկ՝ ամենևին չեն համաձայնուել, ոչ յառաջ և ոչ յետ, այլ եական դերանուան սեռականի պէս կ'կան. Նոյնպէս երբեմն վերջահոլովի հետն ևս. Նանք իմ, քո կամ քոյ բանք, բանք մեր, ձեր բանք, զբանս իմ, զբանս իւր: — Ընդ իմ ձեռամբ, քո ձեռամբդ, մեր Թագաւորի, մեր կենացն, նախնոյն ձեր հօր, իւր մարմնոյն, իւր գործոցն: — Ցետ երթալոյն իմ, զօրուԹեամբ քո մեծաւ, հօր իւր, ցաւոց իմ, հաւատովք ձեր, ի չարեացդ քո:

419. Նոյն, ինչ յոգնակի չունենալոյն համար, չեն կարող Թուով համաձայնուել, միշտ յոգնականի մտօն ևս եզակի կ'դնուեն: Նայց շատ անգամ հոլովով ևս անհամաձայն կ'դնուեն, յառաջ ևս յետ ևս. Ընդնուականի իմն ցանկալ, բարուԹեամբ իմն, ընդ պատենիւք իմն, ոչ առ իմաստուԹեան ինչ, յետ աւուրց ինչ, իրօք ինչ:

Նայց երբոր յառաջ դնուեն, միայնակ խօսքի սկիզբ չեն դնուել, իբրեանցից յառաջ մի բառ կ'ուզեն.

Մեծ իմն անուն.
Ընտիսկաւ իմն յարմարուԹեամբ.
Օտարոտի իմն դէց.
Եա՝ իմն ազնուականի են ցանկացեալ.
Փոքր ինչ դատաստան.
Սակաւ ինչ ժամանակի.
Ի վերայ ինչ բանի.
Ոմն ինչ պիտոյից.
Ընտ ինչ ուտել ոչ ունին.
Ամով ինչ շնորհօք.
Նազուամ ինչ աւուրց.
Ոչ ինչ և այլ խորհուրդ.
Ենիք ինչ կերակուր.
Մի ինչ վնաս առնել.
Յորժամ ինչ մեղաց պատահէ.
Օ՛ի Թէ ինչ պատճառ վընասու կարծէին.
Ոչ ինչ համեմատուԹիւն ոչ գոյ ի նոսա:

420. Մի, երէ՞ն, ոչ հարցականն, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն, ընդհանուր կանանի պէս (408) անհամաձայն ևս կ'դնուեն երբեմն յառաջ.

Մի բանին, մի ուսով, ի՛մի բանէն.
Երկու ամաց, երկու ընկերօք, երկու իրօք.
Որ ձևով, որ աչօք, յոր ազգէ, որ մեղաց.
Այս նշանի, յայս լերին, այս օրինակաւ.
Այն ժամու, յայն տանն, այն երեսուն արամբ, յայն կողմանէ.
Այս բանք, այս բանիւք.
Այն արք, այն արանց, առ այն արամբք.
Այդ նշանագ, յայդ տեղիսէ, յայն գործս.
Այն և այսր իրի, ի սոյն աւուր.
Ի նոյն ժամանակի, նոյն շաբաթի, ի նոյն հօրէ, սոյն խորհուրդք, նոյն բանքն, ի նոյն գործս:

421. Երկուքն ի միասին միշտ ածականի պէս որ բանի կայ, կարող է համաձայնուել ևս՝ և չ'համաձայնուել ևս.

Երկորին ինքեան հիւանդին, նմին ինքեան Քրիստոսի.
Երկոն ինքն տեառն, նոյն ինքն փրկչին անուամբ.
Ի նոյն ինքն ի վերայ այրին. — այս ինքն ի վերայ նոյն ինքն այրին.
Երկոյն ինքն յինէն իսկ առեալ մասամբն. — այս ինքն նովին ինքեամբ մասամբն.
Ի նոյն ինքն Աստուծոյ.
Ի նոյն ինքն ի Թշնամեացն.
զնոյն ինքն գքահանայիցն.
Ոնոյն ինքն կեանս. զնոյն ինքն զօրէնս.
Ոնոսին ինքն զկառսն:

422. Ամէն ածական՝ երբոր գոյականիցն յետ դնուի, սովորաբար միշտ կ'համաձայնուի հոլովով և Թուով, նախադրիւ հոլովիչերի հետ ևս. ինչպէս,

Ուղիղ	Ցուցական
Ոտառ մեծ.	Ոտառք մեծք, մեծամեծք.
Ոտառոյ մեծի.	Ոտառոց մեծաց.
Ոտառով մեծաւ.	Ոտառովք մեծօք.
ի Ոտառոյ մեծէ.	ի Ոտառոց մեծաց.
զ Ոտառ մեծ.	զ Ոտառս մեծս, մեծամեծս:

Հայերէն	Յունարէն
Այր արդար .	Ընդ արդարոց .
Այրն արդարոյ .	Երանց արդարոց .
Այրամբ արդարով .	Երամբք արդարովք .
Ի Այրանէ արդարոյ .	Ի Երանց արդարոց .
զ Այր արդար .	զ Երս արդարս :

423 . Երբեմն որ և իցէ հասարակ ածականն ևս անհամաձայն կ'լինի , մանաւանդ անցեալ դերբայն . Սիրոյն Հոգևոր , արեան քոյ սուրբ , տանն արքունի , սակայ ուժեմն վայրագ և անձոռնոյ . Հրամանաւ արքունի , պատկառն փշեայ . 'ի տանէ Թորգոմական կամ Թորգոմեան , 'ի վերին խմաստութենէն 'ի սուրբ և 'ի խաղաղարար . 'ի մէջ այդ չափ վկայիցէ բազում . երկու մասամբք՝ տիար և զօրաւոր . 'ի զօրացն արքունի , 'ի բանից անտի Յուդայ 'ի զօրեղ և 'ի գեղեցիկ . 'ի տեղւոջ մի սուրբ , 'ի դրախտին եդեմական . գազանք ինչ անհնարին , ժամք հարուստ , բանք սուրբ . բազում ճնաւք գնացին յաշխարհի՝ հոգևոր և մարմնաւոր . դանգակս ոսկի , փայտս եղևնեայ , 'ի վիշտս մեծ , գօրս կուտէր բազում յոյժ , սրիկայս բազում , գամենայն բլուրս բարձր , չարիս մեծամեծ , ձկունս սակաւ ունէին , գրաստս պատրաստական , արդիւնս բաւական , գայան պիղծ , գպարգևս արքունի , բազում կազմուածս ոսկեղէն և արծաթեղէն :

Ի վերայ աշխարհիս Ասպուրական կոչեցեալ :
Ըստ առակաւոր բանին՝ առացեալ 'ի ղէմս հօր :
Ի՝արդեոյ որսացելոյ և ախտիւ գերեալ :
Ի տեղւոջ միոջ ուժգին ամբացեալ :
Հազուագիւտ ընդ քեզ հեծեալ յերկիւարս :
Ոսկեհուռն հանդերձից ընդելուզեալ մարգարտով :
Հարջիք գամենայն քաղաքս ամրացեալ :
Հետս երկուս եղբարս արկեալ ուռկան 'ի ծով :

424 . Այսպէս և Թուական անուանքն , Ի՝ միջակն , և ածական դերանուանքն ևս կ'լինին երբեմն . Յետ տարւոյ մի , աւուրց հինգ , արանց եօթն , ամաց չիսուն և ութ , լը-

տերց հարիւր , առպարիսօք հինգ , օձիւք հնգետասան , դրամբք հարիւր և քսան , յաւուրց քառասուն : — Ի՝հայնաւորի մի , կնոջ մի այրւոյ , գծառով մի : — Հանիս այս , ծերոյն այն , 'ի ժամանակին յայն , դեղովս այս հոգևորաւ , 'ի բանէդ յայդ , յընչից յայն :

425 . Յետադաս գոյականիցն յետ որ մի շաղկապով կապած ածական ևս դնուի , այն ևս նախադասի պէս շատ անգամ անհամաձայն կ'դնուի .

Ըստ հոգևոր մասին և ըստ մարմնաւոր :
Ոչ սակաւ պատուոյ նշանակ է , այլ մեծ և բարձրագոյն :
Ու անտի տասն բանի տեղեկացեալ , կամ ևս աւելի՝ քսան :
Հանդերձ անմոռաց անուամբ և հռչակելի :
Ո՛րինն ժամաւն կամ գտասն :
Յամենակալ տեառնէն և յամենակարող :
Ի գինուորական կարգէ և յաշխարհական :
Ոչաւելի 'ի կրօնաւորական կարգէ և Սարգիս յաշխարհական :
Ընազուագիւտ են մեզ բանք և դժուարապատում :
Ոչ ժնդակ վարուց և աղտեղի :
Ընդհարդաձ մարդկան և պարզամիտ :
Ո՛րչափ գնոյ գգեօղն վաճառեցէք . — այս այնչափ :
Հեշտալուր բանիւք և քաղցրալից :
Ի՝արդկեղէն իրօք , և ոչ աստուածային :
Ընմանալիքս՝ հոգեկան կրիւք միայն , և մարդիկ՝ հոգեկան և մարմնական :
Հանդերձ չորիւք բիւրուք և աւելի :

426 . Ըստ գոյականներիւ , թէ որ հասարակ անուն են , ամէնն մին տեղ մտածելով՝ ածականն շատ անգամ եզակի կ'դնուի , թէ և յետ դնուի . և ս առաւել թէ որ նշանակութիւնն են և յիրուր մտիկ լինի .

Ընդոլմ ցնծութեամբ և ուրախութեամբ :
Ընարկութեամբ և սրտմտութեամբ և զայրացմամբ ևն :

Սակս հացիւ և ջրով :
Երկիւղիւ և խռովութեամբ եպիսկ. :
Ընդ օրթով և ընդ թգենեաւ է-րով :
Օմարմին և զաբիւն իւր ոչ-րէ կամ պնապական :

Բայց թէ որ ամենու վերայ ջոկ ջոկ որոշ հասկացնել պէտք լինի, յոգնակի ևս կ'գնուի.

Փոխատուի և փոխառուի 'ի մի վայր հաւելոյ :
Ա՛ռ գարճաթ և զոսկի ղէպէնը 'ի գանձ տան տեառն :

427. Ւսկ թէ որ շատ գոյականներն յատուկ անուն են, յետագաս ածականն սովորաբար յոգնակի կ'գնուի.

Սաւուղ և Յովնաթան սէրեէտ :
Գաբրիէլ և Միքայել ռեծ :
Երգրայ և Ղէեմեայ արքայէլցի 'ի Բաբելոնէ :
Պետրոսի և Պաւղոսի առաքելոցն :

Նախադասն եզակի ևս կ'գնուի. Սրբոյն Պետրոսի և Պաւղոսի. Օրհնութիւն Երրորդութեան :

Բայց թէ յոգնակի յառաջ գնուի, բացայայտեալն հետն կ'խառնուի (400). Սրբոցն Երրորդութիւն, Նահակայ և Յակոբայ : Երկամբք սրբոյն Պետրոսի և Պաւղոսի : Ա՛ստուածոյ Երեմեայ և Իթենայ :

428. Ընդհանուր գոյականների կամ եզակի ձայնով յոգնականների ածականն՝ շատ անգամ եզակի կ'գնուի, թէ և հոլովով համաձայն.

Ա՛ռ հարսն եղելոյ աւետեացն.
Ընտաւորիս կենաց.
Ո՛րոյ ընդհատ.
Ընդհանուր չարեաց.
Մեծաւ փառօք.
Մեծաւ տանջանօք.
Բացաւ երեսօք.
Բացաւ աչօք.
Յանդիսում կապանաց, այս ինչն յայնպիսւոյ (33).
Յայնմ մարդկանէ : —
Փառք բազում.
Երհաւիրք մեծ. օրէնք աստուածային.
Օ՛փառն յաւիտենական.
Ա՛պրս անարատ ունել.
Փառացս անցաւորի.
Փառօք մեծաւ.
Ա՛նկտի մանրիկ.
Մարդիկ փափուկ.
Մարդկան եղականի :

Ընդհանուր ևս որ միջակն, և ածական դերանուանքն, և դերանուանական ածականներն.

Ա՛ստն որոյ պատճառանաց, որով կամօք, յորմէ պատճառանաց և ի՛ցէ, որո՛ւմ տանջանաց :
Ընդհանուր ընտրհաց, այնմ կենաց, յայսմ կենացս, այսուկենօքս :
Ի՛մոյ յանցանաց, քումդ ընտրհաց, մերոյ մեղաց, իւրով կամօք, 'ի քումդ խնամոց, այս ինչն 'ի քոյդ. մեռաւ յիւրում 'ի մեղսն : —
Կ'րոցս այսմիկ, սանդղոցն այնմիկ, 'ի գերս յայսմիկ, մեղօքն այնու, մարդկանն այնորիկ :
Ի կապանս իմում, 'ի կեանսն քումմ, 'ի կառս իւրում, 'ի մեղս իւրում, մանկտոյ իմում :

429. Երբեմն յուրիշ որ և է գոյականների ածականն ևս այդպէս թուով անհամաձայն կ'լինի, մանաւանդ յառաջ դրած՝ն.

Ըստ առաջնոյ բանիցն.
Ա՛ծի դրանց.
Ոսկւոյ աշտանակաց.
Ո՛ւրանրագունի բեռանց.
Ընդհանրձելոյ և յաւէժաւկայ բարուքեանցն.
Ընդնպիսւոյ բազմագունդ միայնացելոյ.
Ընդնպիսւոյ խոնարհացն.
Ընդնպիսւոյ ձգնուքեանց.
Արպիսւոյ պատկաց.
Ի փոքուէ կողմանց : —
Ընդ վէմ անդամեցն յօշելոյ.
Ի քարանցն հանելոյ 'ի ջրոյ.
Յազգացն հարաւայնոյ.
Ա՛ստն այնպիսի երից փոքու.
Օ՛րօք բազմաւ :

Ընդհանուր ևս որ միջակն, և ածական դերանուանքն և դերանուանական ածականներն.

Ա՛ստն որոյ երից, որով կամիս պատուհասիւք, վասն որո՛յ արդար վաստակոց :
Ընդհանր պատկաց, այնմ գետասստանաց, զայսու աւուրբք, առ այնու ժամանակօք, յայսմ պատերազմաց, յայնմ ժամանակաց հետէ, յայսմանէ երակուքեանց, յարտաքնոցն յայնմանէ հրոսակաց, յայնմ աւուրսն :

Սովին բանիւք, ըստ նմին բանից, ՚ի սմին կողմանց, ՚ի նմին աւուրս :

Ասերայս բանից, քոմ կամ իւրում ճառայից, ձերով պատուհասիւքդ, յիմմէ ջանից. յիւրում ձեռացն, այս էնէն յիւրոյ (33), ՚ի մերում ամն, ՚ի քում շաբագրածուԹիւնս, յիւրում ժամանակս : —

Ռանքս այս, իրքդ այդ, աւուրքն այն, յիշատակօքս այսուիկ, երկոքումբք այսու, Թէնամեացս այսմ, զարոզ զայդ, զբանն զայն, յիրս յայս, ընդ ժամանակս ընդ այն :

Ընդբարբք իմով, յոսկերաց իւրմէ, յիրկոսին ՚ի ձեռս իմում, յարարածն քում, ընդ հարս իւրում :

430. Ընդ սպէս սովորաբար եզակի կ՚ընդայ Ընդ, երբոր մօտիկ լինելով համաձայնի (410).

Ընմենայնի եղելոյն, ըստ ամենայնի իրաւանցս, այսր ամենայնի առաքինուԹեանց, ամենայնիւ այսքանեօք, այլովք ամենայնիւ վարին արուեստիւք, յամենայնէ յայնպիսեաց անտի, յայնմ ամենայնէ վնասակար գանաց : —

Պրուն ամենայն, գործքն ամենայն, պատգամքս այս ամենայն. զօրացն ամենայնի, այլոց իրաց ամենայնի. լուռնականօքն ամենայնիւ. զգանձան ամենայն, ՚ի գաւառն ամենայն, ընդ սուրբսն ամենայն :

431. Ընդ հակառակն, երբոր գոյական անուանքն Թուական աճականից յետ դնուին, շատ անգամ եզակի ևս կ՚ընդունեն.

Օրկուս բուռնն.	Հարիւր ոչխարի.
Երիւք հարցմամբ.	Զորեք հարիւր և երեսուն ամի.
Զորք կանգուն.	Հազար առն.
Յետ հինգ աւուր.	Երկուք հազարօք հեծեալ սպառազինաւ.
Վեց առն.	Երեք հազարք այր.
Ի վեց կանգնոյ.	
Երեքն ամ.	

ՕեօԹն աղջիկն.	Երից հազարաց առն.
Յետ ութ աւուր.	Իւթ հազար հեծեալ սպառազինաւ.
Ինն այր.	Երիւք բիւրուք վահանաւոր զօրու և չորիւք հազարօք հեծելազօր գընդաւ.
Տասն աւուր.	
Տասն բանի.	
Ի տասն գահեկանէ.	
Օերկոտասան ազգն.	Օերկոսին եղջիւր նորա.
Յիսուն արդար.	Յերեսին աշխարհն.
Յիսուն արդարոյն.	Ի չորեցունց կողմանէ :
Վառասուն և միոյ ամի.	

432. Նայց գոյականներն երբ յառաջ դնուին, յոգնակի կ՚ընդունեն, և Թուէրն հնգից անդ՝ մինչեւ տասն՝ նախադրիւ հոլովներին սովորաբար եզակի կ՚ընդունեն.

Ընդք երկու.	Ընմ տասն.
Ընդք երեք.	Տուփք երկոտասան.
Ի հանգնոց երից.	Ընդս քառասուն.
Ընդք չորք.	Ընդ հեծեալս եօԹանասուն.
Ընդք հինգ.	Ընդք հարիւր.
Ընդս հինգ.	Ընդ տեսս հարիւր.
Ընդ ձեռաւք վեց ընտիրք.	Ընդք չորեք հարիւր և երեսուն.
Ընդս վեց.	Ընդաց քսան և միոյ ի քառասուն և միոյ.
Ընդք եօԹն.	Ընդ երկու հազար.
Ընդ ի՞մ աւուրս եօԹն.	Երդս հինգ հազար :
Ընդուրք ութ.	
Ընդուրց տասանց.	

433. Թուէրն վերջահոլով եզակի չեն դնուել՝ ոչ յառաջ ոչ յետ. չի ասուել Տասին աւուր, տասին աւուրց, աւուր տասին, աւուրց տասին, հապա Տասն աւուր, տասն աւուրց, տասանց աւուրց, աւուրց տասանց :

Ասեծ Թուէրին՝ կ՚զտանուի ասաճ գործիականն.

Տասն հազարաւ ընտիր ընտիր արամբք.
Տասն հազարաւ գինու ընտիր զօրու.
Երկոտասան հազարաւ մարտիկ պաերազմող արամբ.

Զորիւք բիւրոյ հետևակաւ զօրու .
Մետասան բիւրոյ վահանաւոր զօրօք : —
Ընծք երեք հարիւրոյ .
Ընտրեալք իրրև վեց հազարաւ .
Ընդհերձ զօրօք վաթսուն և իննսուն բիւրուն :

434 . Կ՚ախտիւրիւ հոլովիչերին ևս համաձայն կ՚գտանուհեն մեծ թուէրն միայն .

Զորք հազարք գունապանք .
Զորք բիւրք մատակ ձիք .
Ընտրեալս հազարս մարս .
Ընտիս հազարս տաղանտս ոսկւոյ .
Ընտրք վեց հարիւրք .
Իշխանք հազարք .
Ընտրք հազարք երեք հարիւրք .
Ոչխարք երեք հազարք .
Ոչխանն երկոտասանս .
Եղինս երկոտասանս .
Եզուրս քառասունս .
Զորս հազարս արս սիկաբեանս : —
Տուփք ոսկիք երկոտասանք .
Վաղաքք երկոտասանք .
Ընդգք չորեքտասանք .
Նարմանդս յիսունս .
Ընշս երկուս հազարս .
Ընտս երիս հազարս .
Օձարակս քսան և երկու հազարս .
Ետևակս հազարս հարիւր քսան .
Գահեկանս երկուս բիւրս :

435 . Ո՞ւստ անգամ աճականի տեղ մի գոյական կ՚դնուի սեռական՝ յատկացուցչի պէս .

Կապաք ոսկւոյ և արծաթոյ . — ասել է ոսկեղէն և արծաթեղէն :
Ընդ զօրութեան . Կ՚ահատակք քաջութեան . — ասել է զօրաւորք , քաջք :
Ընդկիր բարուքեան . Ետրուածք անբժշկութեան . — ասել է բարի , անբժշկելիք :
Գարիսպք բարձրութեան . Ընթոռ բարձրութեան . — ասել է բարձր :
Իրք գարշութեան . Խունկ անուշութեան . — ասել է գարշելի , անոյշ :

Վրուն թանձրութեան . Տկարութեան միտք . — ասել է թանձր , տկար :
Լսող մոռացութեան . Մեծավայելչութեան փառք . — ասել է մոռացկոտ , մեծավայելուչ :
Ոչ էմ անշարժութեան . Ընդան ինչ մորթոյ . Գոփոխմանն անուն . — ասել է անշարժ , մորթային , փոփոխական անուն :
Ետօք բազմութեան այծեացն սևութեան՝ յօդիս դարձեալ սպիտակութեան . — ասել է՝ բազում հօտք սեաւ այծիցն յօդիս սպիտակս :
Գործք բարեաց . Գործք յոռութեանց . — ասել է բարի , յոռի :
Օխթրդ իրաւանց էցեն այսպիսի իրք . — այս ինքն իրաւացի :
Ընտ քեզ ՚ի պէտս արկանել զչափով հանդերձանն և զօգտիցն . — այս ինքն որ չափով է (389) , զչափաւոր և զօգտակար :
Ընանայնութեան հայրենատուր զնացք . — այս ինքն ընտանի :
Ոչ յապականութեան սերմանէն , այլ յանապականացուէն . — այս ինքն ոչ յապականացու :
Կ՚ոքա զի զեղծանելի պսակն առնուցուն , և մեք զանեղծութեանն . — այս ինքն զանեղծն :
Իրրև զարհամարհ մի և զքամահանաց և զերեք դանգեան ՚ի մէջ արկեալ կտտէին . — այս ինքն զքամահելի :

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ – ՈՐ .

436 . Այս դերանունն շատ տեղ եզակին յոգնականի մըտքով ևս բանի կ'կայ , մանաւանդ ուղղական և հայցական .

Զոքա որ կանդ . բազումք որ ունէին . ամենայն մարդիկ որ ըմպեն :

Որդիքն քո զոր դուս սիրեցեր . զգործն զոր ես գործեմ :

Յամենայն ճառոց՝ որ է ի դրախտիդ :

Ջաղերս ջուրցն՝ որ ելանէ ի լեռնոտանէ անտի :

Զղինձ և երկաթ՝ որոյ ոչ գոյ թիւ :

Անք յորոյ վերայ վկայէ :

Ընկողնուքն՝ որով գատապարտեցանն :

Դառաքինութեանցն՝ որով փայլեցին :

Ջաւելորդացն կերակրոց՝ յորմէ ամենևին հրաժարեալ էր :

Յամենայն գործս՝ յորում են մարդիկ :

Ընկեցեն աւուրք՝ յորում Թողցեն :

437 . Այս դերանուան յարաբերած կամ ցոյց տուած բանն Յորէէ՞ կ'ասուի : Որովհետև ասած և իմացած բանն պիտի յարաբերի , սովորաբար յարաբերեալին յետ կ'դնուի , և իւրնով կապուած խօսքի սկզբումն , ինչպես տեսար այժմ օրինակներիդ մէջն :

438 . Դայց շատ տեղ ևս յառաջ ինքն կ'դնուի , յետոյ յարաբերեալն հետևէն կ'գայ . ինչպէս ,

Ազան զի սուրբ է որ եմուտ անդր փոպանուէն տեառն . — այսինքն տապանակն որ եմուտ անդր :

Ո՞ւր է որ ծնաւ արքայն Ահէից . — այս ինքն արքայն որ ծնաւ :

Որ ի ձեռն հրեշտակաց խօսեցաւ ընդ՝ հաստատուն եղէ . — այս ինքն բանն որ :

Ազան որ ի Քրիստոս Յիսուս հաւատոցն որ է (340) :

Որ բարւոք վերակացու լինին երէցունք՝ կրկին պատուոյ արժանի եղիցին . — այս ինքն երիցունք որ :

Դեմետրիոս և որ ընդ նմա ճարտարք . — այս ինքն և ճարտարք որ ընդ նմա էին :

Երբև լուան որ յԱերուսաղէմ Յոռելէլն էին . — այս ինքն Դրաքեալքն որ էին :

Դու որ գործէիր զամբարտաւանութիւն պոռնայեան խայտառակեցեր . — այ զսորդոմացիսն որ գործէին :

Ջոր նախնեացն ձերոց մեծաւ աշխատութեամբ գտեալ էր՝ զա ի միում ամի կորոյս ղէրկէր ոչինչ . — այս ինքն զերկիրն ամենայն ղոր :

439 . Յարաբերեալն եթէ դերանուն լինի , շատ անգամ յայտնի չի գնուիլ՝ զօրութեամբ կ'իմացուի . որ ասել է թէ մի յարաբերիչի դերանուն և յարաբերական գնելու տեղն՝ միայն անուն . և որ կ'գնուի , որ իւրնուրն միևնոյն այն կ'նշանակի (125) .

Որ այժմ կեամ , ասել է եա որ :

Որ մեռաք մեղացն , — ոչ որ :

Ո Հովուեսդ . Որ ուսուցանես զընկերն , — պա որ :

Ո՞վ որ պատուհասեսդ , ո որ զպսակս զայս հիւսեցեր , — ով պա որ :

Որ ի կնէթդ էք , — պա՞ որ :

Որ ձեզ լսէ . Ո բնակեալ է , — նա որ :

Որ կարինն մեծանալ , — նո՞ա որ՞ :

Այսպէս ևս հոլովվեցաւ .

Որով գատիս զընկերն՝ զանձն քո գատապարտես . — այս ինքն այնու որով գատիս . ընդ՞վ , կամ որով պա՞ոչ :

Ոչ յանդիմանն առնել կարեն քեզ՝ վասն որոյ այժմ չա-
րախօսեն գինէն. — այս ինքն գայն վասն որոյ. ինչ,
կամ՝ ըստ ինչ հմարը որ չարախօսելոյ են անոմ:

Ոչ որովհետև ցանկացեալ էք՝ վաղվաղակի տամ գտանել
ձեզ. — այս ինքն գայն որովհետև ցանկացեալ էք. ոմ-
ր կարօտէլ է:

Որոց ոչ պատմեցաւ վասն նորա՝ տեսցեն, և որոց չէ՛ղէ
լուեալ՝ ՚ի միտ առցեն. — այս ինքն նոքա որոց. ո-
մանք որ չպատմէցաւ, և այլն:

Երանելի որոց ոչ իցէ տեսեալ և հաւատասցեն. — այս
ինքն այնոցիկ որոց ոչ իցէ տեսեալ. որ պետք չէ-
լինեն ի հաւատան:

Ընդէ՞ր ոչ գոխ յառնս յայսմիկ, զորոց գուք չարա-
խօսէք զգիմանն. — այս ինքն յայնց որոց չարախօ-
սէք. ինչ, կամ՝ որ իմիջերի հմարը որ չարախօսելոյ է անոմ:

440. Ի որբոց այսպէս դերանուն յարաբերեալն ոօրու-
թեամբ կ՚իմացուի, յարաբերականն կամ միջակ անուանն ո, որ՝
կ՚ըլինի որ այն ճանճուկ յարաբերեալ դերանուան հոլովին յինք
կ՚առնի, կ՚ըլինի և ոս որ չի առնել և ինքն իւր պէտք եղած հո-
լովին կ՚ընուի. ինչպէս երկու կերպի օրինակն ևս յիրար մօտ
դրած կ՚տեսնես.

Որում խնդրէ ՚ի քէն՝ տուր, և որ կամի փոխ առնուլ
՚ի քէն՝ մի դարձուցաներ զերես. — այս ինքն այնմ
որ խնդրէ, յայնմանէ որ կամի. (երկու կերպն միև
տեղ):

Լուսեալ չհամարձակէին գոր ինչ եղև. — այս ինքն
զայն որ ինչ եղև:

Ընդանց նորա եղև և ոչինչ որ ինչ եղև. — այս ինքն
ոչինչ յայնմանէ որ ինչ եղև:

Գուք ոչ մտանիջ, և զորս մտանիցն՝ ընդդէմ կացեալ
արգելջիք. — այս ինքն զայնոսիկ որք մտանիցն՝
արգելջիք:

Գուք ոչ մտանէք, և որ մտանելոցն են՝ արգելջիք.
— այս ինքն զայնոսիկ որ մտանելոցն են:

Գուք ոչ մտանէք, և որոց մտանիցն՝ չտայք թոյլ
մտանել. — այս ինքն այնոցիկ որ մտանիցն:

Օ՜ի երևելի կացցեն՝ որ անցանիցն ընդ ծով նաւօք.
— այս ինքն այնոցիկ որ անցանիցն:

Գոհացեալ վասն որոյ գաղտն արար. — այս ինքն
վասն այնը զոր:

Վասն որ ասեմն Թէ, և այլն. — այս ինքն վասն
այնը որ ասեմն (634):

Վասն որոց առաքեցանն ՚ի Յովհաննէ. — այս ինքն
վասն նոցա որք առաքեցան:

Վասն որք ոչ կարևւոր համարին. — այս ինքն վասն
նոցա որք ոչ համարին:

Իմանք յորոց անդն կայիմ. — այս ինքն յայնցանէ
որք անդ կայիմ:

Ո՜ատեայ առ ի ոմն որ անդ կայիմ. — այս ինքն
յայնցանէ որ անդ կայիմ:

Ընդ առ յորոց աճէրն ձեռամբ իւրով պատարագս.
— այս ինքն յայնցանէ զորս աճէրն:

Որոշումն արտաքոյ բնութեան՝ շունս գործէ յոր-
մէ բաժանեցաւ և առ որում բնակեաց. — այս ինքն
զայն յորմէ, և զայն առ որում:

Ոչ գարշիս յումեքէ, յորոց արարեր. — այս ինքն
յումեքէ յայնցանէ զորս արարեր (394):

Կողոպտեցին հանին և ոչինչ թողին զոր ընդ իւրն
ունէր. — այս ինքն ոչինչ յայնցանէ զոր ընդ իւր
ունէր:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԴԻՄՈՐՈՇ ՅՕԴԵՐ – Ս, Դ, Ն

441. Այս յօդերն, ինչպէս ասինք և ցոյց տուինք (140), դերանունից ոյժ ունենալով կ'որոշեն կ'յայտնեն անորոշ և անյայտ անունն. ո և ոջ, ոյ, ոյք, իմ, ոյդ, ոյս, ոյդ ևն. կ'որոշեն. իսկ ն, նա, այն նշանակելուց արտաքոյ, յատուկ որոշող և յայտնող յօդ ևս է, և կ'դնուի այն անուան վերայ՝ որ յառաջուց յայտնի է կամ խօսուել այ վերէն. կամ եթէ որ յառաջ ևս չի խօսուել վերէն, բայց մի կերպով որոշուած մանաւանդ է: Ինչպէս, եթէ որ անյայտ և անորոշ ծովի կամ հացի և ձկների վերայ խօսուի, կ'ասուի.

Այնոյն ուխք ի ծով գնան և ծով ոչ ընու:

Ձէ գոյ մեր աւելի քան զհինգ նկանակ և զերկուս ձկունս:

Բայց երբոր միև էլ յառաջուց խօսուած կամ իմացուած ծովի և հացի ու ձկների վերայ նոր թէ խօսուի, կասուի,

Ոչինչ արասցուք քեզ և դադարեսցէ ծովս ի մէնջ. – առէք ընկեցէք զիս ի ծովդ. և դադարեսցէ ի ձէնջ ծովդ. և առին զՅովնան և ընկեցին ի ծովն, և դադարեաց ծովն ի խռովութենէ իւրմէ:

Այսպէս ևս անորոշ և չմանաւանդ մտքով կ'ասուի.

Հոգի սուրբ Այտուծոյ գոյ ի քեզ:

Որդի Այտուծոյ դանձն իւր անուանէ:

Իսկ որոշեալ և մանաւանդ մտքով, թէ և յառաջ խօսաւել չի վերէն, կ'ասուի.

Սուրբ հոգին իմաստութեան փախիցէ ի ինեանգութենէ:

Որդին Այտուծոյ եկն և ետ մեզ միտս:

Եւ օձն էր իմաստնագոյն քան զամենայն գազանս. – այս ինքն օձն, օձ գազանն:

Յառաջնում ամին Կիւրոսի արքայի Պարսից, ի կատարել բանին տեառն ի բերանոյ Երեմիայի մարգարէի, զարթոյց տէր զոգի Կիւրոսի Թագաւորի Պարսից:

Խսկզբանէ էր բանն, և բանն էր առ Այտուած, և Այտուած էր բանն. – առաջինն բանն որոշելոյ և մանաւանդելոյ հատմար ունի ն. իսկ յետի երկուքն կ'նշանակեն այն բանն:

442. Ինչպէս 140 թուումն ասաց ի ձեզ յայտնի կ'լինի, յօդն շատ անգամ մի բառի վերայ դնուելով՝ զօրութեամբ մէջ կ'բերի մի դերանուն, մի անուն, և մինչև մի բայ ևս. ինչպէս,

443. Դերանուն ցուցանող յօդ.

Ընկալ զփոքրս ի տկարէս, և ընդհանդիպ զմեծդ առ ի հզօրէդ. – այս ինքն զայս իմ փոքր յինէն ի տկարէ, զայդ քո մեծ ի քէն ի հզօրէ:

Տեսանեմ զմարդիկս զի ջրջին. – այս ինքն զայս մարդիկ որ աստ մօտ են:

Ընդքայդ Խսրայէլ. – այս ինքն դու արքայ Խսրայէլի:

Օգն կերակուրդ. – այս ինքն զայն կերակուր քո:

Ի բոլորեսին յայսոսիկ Թուղթս. – այս ինքն յայսոսիկ Թուղթս նորա, իւր:

Այտուծոյն, աստուածոյքն. – այս ինքն աստուածոյնն, այն որ աստուածոյ է. նոքա որ աստուածոյ են:

Մաքսաւորն և ձկնորսն և առանց դպրութեան. – այս ինքն այն որ առանց դպրութեան է կամ էր:

Մարմնոյն, հոգւոյն. – այս ինքն այն որ մարմնով է, այն որ հոգւով է:

Ընդ ի մէնջս կամ ի մէնջն, առ ի ձէնջն. – այս ինքն այս որ, այն որ ի մէնջ է, ի ձէնջ է:

Օրը արար Տէրն յորժամ քաղցեաւն և որ ընդ նը-

նման էին. — այս ինքն քաղցեաւ ինքն և որ ընդ նը մայն էին:

Իւ այսպէսն՝ յողն և ընդ պատճառաւ է. — այս ինքն այն որ ոչ այսպէս է:

444. Ընտ ցոցանող յօդ.

Երթէ ընդ փայտ դալար զայս առնեն, ընդ չորն զինչ լինիցի. — այս ինքն ընդ չոր փայտն:

Ընշակերտքն Յովհաննու պահեն ստէպ, և քոյդ կամ քոյդ ուտեն և ըմպեն. — այս ինքն քո աշակերտդ:

Այս առակ և դատաւորին. — այս ինքն դատաւորի առակն:

Ի բարկութիւն որ գովելի է ի դրոց, որպէս Մովսէսին. — այս ինքն որպէս Մովսէսի բարկութիւնն:

Վա է քաւութիւն մեղաց մերոց, և ոչ եթէ մերոցն միայն. — այս ինքն մերոց մեղաց միայն:

Ընդէ՞ր ոչ բովանդակեցէք զսակ աղիւսոյն ձերոյ որպէս յերէկն և յեռանդ՝ և զայսր աւուրդ. — այս ինքն և զսակդ այսր աւուր:

Յարեաց գործողքն պսակին, չարեացն՝ ի հուրն անշէջ մատնին. — այս ինքն չարեաց գործողքն:

Իւ էր հաւասար պարզաբար գնալն և այնպիսի պատճառաւն. — այս ինքն այնպիսի պատճառաւ գնալն, երթն:

445. Իւ ցոցանող յօդ.

Պաշարեցից զքեզ որպէս և Դաւիթն. — այս ինքն որպէս և Դաւիթ պաշարեաց:

Զգործ տեառն գործէ որպէս և ես. — այս ինքն որպէս և ես գործեմ:

Ելից և արարից որպէս միշտն. — այս ինքն որպէս միշտ առնէի, արարի:

Զառնելն և զոչն. ի բանալն և յոչն. — այս ինքն զոչ առնել, յոչ բանալ:

446. Ճատ անգամ մին անուան յօդն՝ իւրմէ յառաջ դրած ածականի, յատկացուցչի, բացայայտչի, խնդրոյ և մակբայի վերջն կ'դնուի. ինչպէս,

447. Ընծայնի վերջ յօդ.

Կորուսեալս հողոյ.	Ընդերկեանն ցնծութեամբ.
Կարօտս անձին.	Ձմարիտքն երկրպագուք.
Ինչաւոր և մեծս արարածոց.	Երկուցն եղբարց.
Վենակալ մեծանուն տէր.	Ի չորից հիւթոց.
Ով քաջդ խոհեմք.	Հիմումն անձին.
Երարչականդ քո հրամանաց.	Ամոցս բանից. քոյովդ բանիւ.
Միածինն որդի.	Վուժդ կուսութեան.
Օհինգն ևս փեղկ.	Ի քուժդ լրութեան.
Ի ծայրածաւալն ծովէ.	Ուրումն որդւոյ:

448. Յարկացոյցի վերջ յօդ.

Օսրբութեանն օրէնս.

Օի ինչ օգտեցուցանէ ամենցին լուսաւորութիւն զհասարակացն անտեսութիւն.

Օինքեանն սպանանէ զվէսայ.

Օնորոգն հաւաստութիւն:

449. Ածայայտչի վերջ յօդ.

Եպիսկոպոսն անուն՝ ի հել	Ի Աինն անապատէ.
լենացի լեզուէ է.	Օկուսանն աւան.
Ակլաեն գետոյ.	Ձայրդ անուն՝ մի է:

450. Խնդրոյ վերջ յօդ.

Ընմանութիւն Յուսուճոյ է սուրբն և արդարն գոլ հանդերձ խոհեմութեամբ. — այս ինքն սուրբ գոլն և արդար գոլն:

Օինչ էիցէ ի մեռելոցն յառնել. — այս ինքն յառնելն ի մեռելոց:

Յընկեցիկն առնել զնա. — այս ինքն յառնելն ընկեցիկ:
Ջարն 'ի չարն գործելոյ առնու զանուն. — այս ինքն 'ի չար գործելոյն:
Ի բարին խօսել և 'ի չարն. — այս ինքն 'ի բարի խօսելն և 'ի չար խօսելն:
Յետ այնչափ ուղղութիւնն գործելոյ. — այս ինքն յետ գործելոյն այնչափ ուղղութիւնս:
Ազան Ընտիրքայ Երևեալն անուանելոյ. — այս ինքն անուանելոյն Երևեալ, Երևելի:
Օձանձնէ անկոյթ առնես 'ի մարդոյ առիւծդ եղելոյ. — այս ինքն եղելոյդ առիւծ:
Յինէնս գործեցեալոց. — այս ինքն գործեցեալոցս յինէն:
Յորժամ յիսս խորհրդոց լինիք վերահասու. — այս ինքն խորհրդոցս որ յիս (389):
Յաղագս առ մեզն գթութեան. — այս ինքն գթութենն որ առ մեզ:

451. Մուէյտ վերայ յոդ.

Ազաղն առնելով. ցանգն հայելով. — այս ինքն վաղ առնելովն, ցանգ հայելովն:
Օկարին իսկ զոք շռայլեալ. — այս ինքն զոք զկարի իսկ շռայլեալն:
Միւսանգամն գալստեան դատաստան. — այս ինքն միւսանգամ գալստեանն:
Օանդն աւուրս. անդն իրաց. — այս ինքն զաւուրսն որ անդ, իրացն որ անդ:
Օայն ևս կազմէ՝ զմին կարծել գոլ թշնամիս. — այս ինքն զմի կարծելն:

Ընդպէս ևս (ըստ 447) յատուկ անուանց սովորաբար նահապետաց աճականի վերջն կ'դնուի յոդն.

Մեծն Պաւղոս.
Ընդին Ազաղաշակ.
Երուսաղեմեան Տիգրան.
Կորն Երուսաղեմի.
Իմն Կիրիգոր.
Մերոյն Հայկայ.
Վրացին Հայկայ.
Հարեբարին Յիսուսի.
Օմնծէն Յահակայ.
Ընծուտն Ընտուածք.
Մեծիդ Ընտուծոյ.
Ի մարգասիրէն Ընտուծոյ:

452. Երբեմն ևս որ և իցէ անուան յոդն՝ յետի աճականի վերջն կ'դնուի, երբոր մի ջոկելով կ'առնուի.

Որ տեառն մեծն և երևելին:
Տէր ամենակալն խնդրեսցէ վրէժ:
Օրհնեցէք զԸնտուածք բարեբարն:
Վառնացուցին զԸնտուածք բարձրեալն:
Ընդ լի գիտութեամբ հայուիս և առաւելեալ յունիւն:
Վարձան արք Իսրայելի ասպատակեալքն զհետ այլազգեացն:
Ընդանց խստասրտացդ այդոցիկ:
Յամենայն ազգաց եկելոցն 'ի վերայ Երուսաղեմ:
Օայս յայտ առնէ Պաւղոս մեծն:
Ընկաւ Բաբելն մեծն: Ալր էր 'ի ազար մեռեալն:

Բայց հետ գրած թուի և դերանունական աճականների համար չի լինել ասել՝ Ղազարոս երկուց կամ երկոցունց, մանկանց եօթանեցունց, որդի քոյ, որդւոյ իւրոմն, բանից իմոց կամ քոյ. — այլ պիտի ասել Ղազարոսի երկուց կամ երկոցունց, մանկանցն եօթանեցունց, որդիդ քո, որդւոյն իւրոմ, բանիցս իմոց, բանիցդ քոյ:

453. Շատ անուանք, որ ե- ով 'ի սկսին կապուած գտանուին, շատ անգամ առաջնոյ վերայ միայն դնուելով, երբեմն ևս միայն յետի վերջն, ամէնն ևս որոշուած կ'համարուին.

Կարկուտն և անձրև.
Ղքատն և տնանկ.
Ամբեցան խեցին և երկաթ.
Ղզն քո և քահանայապետ.
Օմեծամեծն և զիւրքունս. —
Օբովանդ ուստի ոսկին և արծաթին հատանի, — կամ
Օբովանդն ուստի ոսկի և արծ-

պետք .
Դսլիրքն և փարիսեցիք .
Վհահանայապետքն և ըլ-
պիրք և փարիսեցիք .
Պիղծ և անուանարկ .
Օպտուղ ցորենոյն և գի-
նւոյ և ձիթոյ և մեղու .
Օրն կամ մօր .
Ի քերան կործանելոցս և
չարչարելոց .
Կացին և պանդխտաց .
Օխուն և գհամր , զակա-
նին և գկոյր .
Անբեաց գխեցին և ղեր-
կաթ .
Օպղինձն և զարծաթ և
ցոսկի .
Ճաշն հատանի .
Վհաստնեալ լինելն ոսկերք և
մարմինքն .
Օքաղցրութիւն և գսաստ-
կութիւնն Աստուծոյ .
Ամվ պիղծ և ամենա-
պիղծդ .
Ամվ խորք մեծութեան և
իմաստութեան և գիտու-
թեանն Աստուծոյ .
Եղութեամբ և հանդարտու-
թեամբն Քրիստոսի .
Ման հարց և մարցն .
Բաման ետ մոգաց և մոգպե-
տացն .
Պականացու արծաթեղինօք
և ոսկեղինօքն :

454 . Երբեմն աւելի ևս կ'դնուի , գոյականի վերջէն ևս ած ականինն ևս , յատկացեալի վերջէն ևս յատկացուցչինն ևս .

Յարանցս յայսցանէ եկեղեցս ընդ մեզ .
Ման զարսդ մտեալդ առ քեզ .
Ատուցանել գայն թագաւորին երկնաւորին .
Ղգացն առաջնոցն .
Ի չարէն որդւոյն սատակեցաւ .
Գատմէր գիրսն եղեալսն .
Օաւազանն մեծամեծն .
Օմիջինն այսոցիկ տեսութեանց ընտրեսցուք զբանն : —
Տեսիլս Դաքելոյս . Ամենայն ժողովուրդն երկրին .
Ի վերայ աշտարակացն քաղաքին .
Օբանակն եգիպտացւոցն :

Ուր բաւական էր ասել միայն՝ Յարանցս եկեղեցդ , զարսդ մտեալս , թագաւորին երկնաւորի , զգացն առաջնոց , ի չարէ որդւոյն , — տեսիլ Դաքելոյս , ամենայն ժողովուրդ երկրին , ի վերայ աշտարակացդ քաղաքին , զբանակն եգիպտացւոցն ։ Եմ զբանակ եգիպտացւոցն ։

455 . Երբոր մի գոյական այս , այդ , այն դերանուններէրնէ հետ դնուի , հարկաւոր չի վերջէն յօդ դնել . Այս այր , զայն այր , այդր բանի , յայնմ աւուր , այսու օրինակաւ , այդց պարծանաց , յայնց ժամանակաց , այս բանք , այսոքիկ բանք , յայդոսիկ տեղիս , յայնոսիկ գործս ։

Կայ կարելի է և դնուել . Այս երանելոյս , այս կարգաւորութեամբս , այս կրիւքս , յայսմ կենացս , յայսցանէ ի գործոցս . յայդմ ահաւոր անուանէդ , զայդ նշանսդ . այն քնութեանն , յայն տեղին , յայն տանն , զայն ջուրսն , զայն տեղեօքն , այնմ աւետեացն , յայնմ աւուրսն , այնց բանիցն , զայնոսիկ արհաւիրսն ։

456 . Կայց երբոր գոյականն յառաջ դնուի , սովորաբար միշտ պիտի յօդ դնել վերջէն , մանաւանդ ուղղականինն և հայցականինն .

Օրս այս .
Որդիս մեր այս .
Յողովուրդս քո այս .
Ի հիմս այսորիկ .
Ընտ բանիս մեծի այսորիկ .
Ընդ նուամբս այսուիկ .
Ընքս այսոքիկ .
Ընբանցս այսոցիկ .
Մոռչունդ այդ .
Մողքովդ այդուիկ .
Յերկմանէդ քումմէ յայդմանէ .
Ատենիդ գտելոյ այդորիկ .
Սակերդդ այդոքիկ .
Ուրդդ այդ .
Ուրն այն .
Արդդն այնմիկ .
Ընտ բանին այնմիկ չարի .
Ղգաւն այնուիկ .
Ուրքն այնոքիկ .
Ուրքն այն .
Յետ աւուրցն բազմաց այնոցիկ .
Յաւուրսն յայնոսիկ ։

457 . Երբեմն առանց յօդ դնելու ևս կ'ասուի , մանաւանդ վերջահոլովներէրնէն , կամ թէ որ դերանուանական անճական կամ յատկացուցիչ ունենայ մեծն .

Յաւուր յայսմիկ .
Յադգէ յայսմանէ .
Ի տեղւոջ յայդմիկ .
Ի ջրոյ յայդմանէ .
Ի ժամանակի յայնմիկ .
Յօրէ յայնմանէ : —

Ի գաւակէ իմմէ յայսմանէ .
Ընդդէմ քո այս .
Ծողովրդեան քումմայմ .
Ծառայից քոց այսոցիկ .
Օմարմին մեր գայս .
Ոչխորհուրդ քո գայդ :

458 . Գերանուանական ածականներն էմ, ոյ, և այլն (134) երբ մինէկ ասուէն՝ միշտ յօդով բանի կ'կան. Իմ, իմդ, իմն, գիմն, գիմոն, յիմոցն, քոյդ, քոյումդ, քոյովս, քոյովդ, քոյոցն, 'ի քումմէդ, 'ի քումմէն, 'ի քոյոցդ, մերովս, 'ի մերմէն, ձերդ, գձերն, ձերոցդ, ձերովքդ, գիւրն, իւրոցս, յիւրոցն, գիւրան, նորայն, գնորայն, 'ինորայոյն, նորայովքն, գնոցայսն, և այլն : Ընդ ինչպէս տեսար, բոլորն երեք յօդն ևս կ'առնեն տեղի համեմատ և այն զանազանութեանն որ ցոյց ենք տուած 'ի 140 :

459 . Ըստ անգամ դիմորոշ յօդերի փոխարէն բանի կ'կան այր, այդր, անդր մակբայքն՝ պարզ նախդրիւ տրականի հետ, առ, այդր, անդ՝ նախդրիւ վերջաւորով տրականի հետ, առ, այդ, անդ՝ բացառականի հետ. որ երբեմն այս, այդ, այն դերանուանց տեղն ևս կ'բռնեն դոքա բոլորն, ինչպէս որ յօդերն ևս. այսպէս,

Ի տեղի այսր գալ. երթեալ էին 'ի քաղաք անդր, 'ի վաղիւ անդր, յիւրմէ անդր կամ առ իւրան անդր եկն .
Ի դրախտի աստ .
Ի ժամանակի աստ յայսմիկ .
Ի թղթի այդր .
Ի պարտիզի անդ .
Յադգի անդ իւրում .

Յադգէ աստի խոտորելոյ յայսմանէ .
Ի հիւանդութենէ աստի իմմէ յայսմանէ .
Ի մերոց, 'ի քոյոց աստի .
Ի տեղւոջէ այսի .
Ի մասանց այսի .
Ի քոյոց այսի .
Յառնէ այսի յայդմանէ .
Ի լեռնէ անտի .

Ի ժամանակի անդ .
Իմ արքայութիւն չէ յայսմ աշխարհէ . եթէ յաշխարհէ աստի էր, սպասաւորքն իմ մարտնչէին արդեօք .
Յերդմանէ աստի իմմէ .
Ի նզովից աստի իմոց .
Ի ժամէ աստի յայսմանէ .

Ի սրտէ անտի .
Ի քնոյ անտի .
Յիւրոց, 'ինորայոց անտի .
Ի սիրոյ անտի Աստուծոյ .
Ի նոցա անտի յուսոյն .
Ի ծմակին կողմանց անտի .
Ի մեծամեծաց աւագաց քանանացւոց անտի :

460 . Երբ որ յօդնակի հայցականներն և նախդրիւ տրականներն ո յօդ առնելու լինեն, անուշութեան համար շատ տեղ իւրեանց սկզբ քէ կ'փոխեն ըստ 60 և կ'ասուի Օքանքս, զէքս, զանարժան ծառայքս, 'ի ծառայքս, առ փրկեալքս, ընդ հողեղէնքս. — փոխանակ ասելոյ զքանսս, զէսս, զանարժան ծառայսս, և այլն. ինչպէս որ երբեմն ևս կ'ասուի. Օմեղսս զայսոսիկ, զերիս Թագաւորսս, յիրսս յայս, 'ի հարսանիսս :

461 . Միջակ անուանքն ղէնէ, ով կամ ո, որ, և յարաբերական դերանունն որ, բնաւ ամենևին յօդ չեն առնել. բնաւ չի ասուել որ եմ, որոյ, որոմէ, որումն, որովհետև, յորոյ, ըզր, ըզրոն, եւն. նոցա փոխարէնն՝ հետ ընկած բայի վերայ կ'դնուի յօդերն, ինչպէս այժմ կարգաւ կ'տեսանենք :

462 . Ոչ որ որ յարաբերականից կամ ով, ո, որ, ղէնէ միջակ աննէրից, կամ նոցա միտքն ուննեցող՝ որպէս, որպէսէ, որոմն, որչափ, որ, ուրուք, յորժամ, էբրև, ինչ, չէ, չէորէ բառերից յետ՝ մի դիմաւոր բայ լինի, այն բայն շատ անգամ դիմորոշ յօդ կ'առնի, և ես, քո, նա, այս, այդ, այն դերանուանց, կամ ոք, անդ, այսր, այդր, անդր, ուրուք, ուրուքէ, ուրումն, այժմ մակբայիս մնի ոյժն կ'ուննենայ այն յօդն. ինչպէս,

Որ խօսիմն ընդ քեզ .
Օր խորհեցայս առնել .
Գիտէք զինչ ասեմն .

Աստի ելին .
Մինչ երթայինն .
Օր պարտէաքն առնել .

Նա այր տառապեալ զինքըդ կամն հիացեալ .
Ոչն զոր ասեմք .
Որ գրեցիդ .
Գիտէք զինչ արարիդ ձեզ .
Որ կամիմն .
Որ առեամն .
Որում չեմն արժանի .
Որ քակեցին .
Ողորմեցայց որում ողորմեցայցն և գթացայց որում գթացայցն .
Որ ինչ շնորհեցեմն .
Որպէս երդուայն .
Ես որպիսիս կամիցիմն .
Նա ուստի եմն գիտէք և ուր երթամն գիտիցէք .
Որ ուսարուքն և ընկալարուք և լուայք և տեսէք յիս .
Որ տեսանիցէքն .
Որ էջն յերկնից , որդին մարդոյ՝ որ էն յերկինս .
Որում չէն մարթ լինել .
Ուր չիքն փոփոխումն .
Որ գթայն .
Որ տայն ամենայնի .
Նյն որ սրբէն և որ սրբին .
Որ ուտէն .
Ոչ ուր զիարդ ասէն .
Որ ընթեռնուն՝ ի միտ առցէ .
Մինչդեռ կայրն կախեալ .
Որ եկնն . յորժամ եկնն .
Որ ինչ խնդրիցէն .
Ուր էաքն ժողովեալ .
Մինչ էաքն մարմնով .
Աստուածոյն կաց յոր ուսարդ .
Զգիտեմ զինչ խօսիսդ .
Ինչ է այդ զի խորդասդ .
Ի կայ մեր և քո՝ զի եկիրդ այսր .
Որ ընթեռնուցուքդ .
Որպէս էքդ անխմոր .
Ոչն որչափ էքդ .
Այլ զի յղեցէքդ առ իս .
Սա զոր տեսանէքս .
Որ ասեմն՝ նա ոչ գիտէ .
Ուր և կոչիմն՝ գնասցիս .
Որով հմամբիքն ունել .
Որոյ եղերուքն դուք որդիք .
Ոչն փութացաւն և առաքեաց . — այս ինքն քան թէ զի փութացաւն .
Որ առեաննն զիս .
Որք կամինն մեծանալ .
Որ կանն . որ ննջենն .
Որ ասէս կամ ասէդ՝ այսպիսի ինչ է .
Ինչ է այս զոր ասէս ցմեզ .
Դառաւել քան զոր երևիս մեզ և գիտիս .
Որ եկնս ի վերայ .
Որպէս ասացաւս .
Որ ենս . որ կանս .
Մոքա որ խօսկնս .
Իվ է որ ասէդ ցքեզ .
Որ խօսիդ ընդ քեզ՝ նա է .

Այսուհետև որ նստիցին .
Որ արար Գաւիթ՝ յորժամ քաղցեաւն և որ ընդ նմայն էին .
Էզգի մեռաւն՝ այլ զի խաչեցաւն .
Այդ որ ասիդ .
Ի միջ դռոցա որ կանդ աւադիկ .
Ուր էրդ յառաջն .
Որ ընտրեացդ իւր տէր .
Որպէս և ասացաւդ ։

463 . Նթէ որ նոյն բառէրիցն յետ բայիցն յառաջ՝ անուն բայի կամ խնդիր մի դերանուն լինի , յօդն այն դերանունն կ'առնի , թէ և բայն յայտնի դրած չ'լինի՝ բայց զօրութեամբ իմացուի (340 , 445) .

Որ ինչ ես գործեմ .
Որ գործ տեառն գործէ՝ որպէս և ես . — այս ինքն որպէս և ես գործեմ .
Որ ես իջանեմ .
Որ ես բժշկեցի .
Որ շուրջ զմեռքդ բնակեալ են .
Որ ես պատուիրեմ .
Ուր ես եմ .
Ուր ես երթամ .
Որ զինն սիրեն .
Որ յինն մեղանչեն .
Որ մեք քարոզեմք .
Որ դուդ առնես .
Ես գիտեմ զինչ դուդ ասես .
Որ վասն քոյն մատնեցաւ .
Որ շուրջ զքեզդ են .
Որ իբրև զքեզդ իցեն .
Նդ որս դուդ զարմանայք .
Օյրն զորմէ դուդ ասէք .
Մինչ առ ձեզս եմ .
Որուհետև դուքս էք բնա-

Ես զի ասիդ .
Ի միջ դռոցա որ կանդ աւադիկ .
Ուր էրդ յառաջն .
Որ ընտրեացդ իւր տէր .
Որպէս և ասացաւդ ։

Որ ինձ ես գործեմ .
Որ ինձս ընդ ձեզ խօսի .
Որ ինչ յինէն խնդրեցեր .
Որպէս մեք լաւք .
Որ ես սիրեմ .
Որոյ իւրն է հանդերձեալքն .
Որ զիւրեաւն էին .
Որոց իւրն հրամայ տուեալ էր .
Որ սայս առնէ .
Որ դայդ մարգարէանայ .
Ո՞չ տեսանես զինչ դոքայդ գործեն .
Ուր նայն վախճանեսցի .
Որպէս նայն Քրիստոսի է .
Որոց նմայն զայն շնորհեալ էր .
Որ ի նմայն ճնեալ է .
Ես վասն այլ իրիք՝ այլ զի նմայն չլաւան .
Որ զնովաւն էին .
Յորժամ նոքայն նախատէին .
Որ նոքօքն խրատիցին .

կեալ.
Որում դուն վկայեցեր.
Զոր դուք ոչ գիտէք.
Զորս դուք պանծացիջէք.
Մինչ առ ձեզն իսկ էաք.
Որ ի վերայ նոցայն մեռաւ.
Որք զայս խորհիցին.
Որք զայն կարին.
Որ զայնն առնեն.
Որք զայսոսիկն պահանջին:

464. Զուրիշ տեղ և յուրիշ կերպով, առանց այն բառերին յետ լինելոյ, այդ դերանունքն սովոր չեն յոդ առնելոյ. փոքր տեղ կ'ասուի

Պտուն գիտա.
Իբրև զճեղդ եմ ևս էի.
Ընդքեր ոչ նայն հարկանէր.
Ծէ զասյն ասեն.
Եւ այնքն ոչ դադարէին.
Զայնցն որ ողջոյն տայցեն:

465. Զմանապէս յետ նոյն բառերիցն՝ յուրիշ որ և իցէ մի անուն բայի կամ խնդիր որ բայիցն յառաջ լինի՝ մոտիկ կամ մի փոքր հեռի, յոդն նոքա կ'առնեն կամ նոցա ածականներն. ինչպէս,

466. Ընդուն էային՝ յոդն առաջ.

Զոր Յուտուածն առաքեաց.
Որով բազումքն իսկ զեղխանան.
Որ Քրիստոսն նստի.
Որոյ երեսուն և ութն ամ էր.
Որ ի բարեն ընտրելակիցն եկեղեցի է ևս ընտրելակից եկեղեցին է. — այս ինքն ընտրելակից եկեղեցին որ ի Բաբելն է:

467. Խնդրէն՝ յոդն առաջ.

Ինձ որ տրուպս եմ.
Որ կարօղքս եմք.
Յստ ուր հրամանս առաք.
Զկնի քո չքեր է զի ես առաստ եմ.
Մինչ դեռ աչէկոծն ծովածուփ էջէ.
Որ աւարն հարկանէր.
Մինչդեռ այգն կաւէր լինել.

Որ ձիթենիդ վայրենի էիր.
Դուք որ չարքդ էք.
Որ ամենեցուն ցդ ևս Թագաւոր.
Աստի արժանդ իցէ ինձ ուրախ լինել.
Որ հուրն ճախիչ է.
Որ կարի վայելուչն իսկ է.
Մի ընդ այն նայիցիս՝ զի նեղն և անձուկ և խիստ է.
Որպէս պարտն է գիտել.
Որ բունքն իսկ են.
Ինքն որ Յստուածն էր.
Որոց պարտն և պատշաճ էր խնդալ.
Որ Քրիստոսիւն խօսէր.
Որ յաւիտենիցն եմ.
Զոր ոստանիկան անուանեն.
Որում բարձրանձնն ասէին.
Որ խրատն տայ ևս ետ.
Որ ոչինչն ունէին.
Որպէս միանչ յարդն տայիւն.
Ընդ որում անհաշտ թըշնամութիւնն պարտ էր ունել՝ և ոչ բարեկամութիւն.
Որ զԵրիքովն կործանեաց.
Որ ի վերն քան զՕրըրուանն էր.
Որ Յերապօլիսն իցեն.
Որ ի բանտն տայի.
Որ օրինօքն էին.
Որ ընդ աչմէն իցեն.
Որ ի վերուստն գայ:

468. Ընդսպէս ևս անորիշ, անցեալ և ապառնի դերբայքն՝ երբ դիմաւոր բայիցն յառաջ լինեն, իւրեանք կ'առնեն յոդն կամ իւրեանցից ևս յառաջ մի բառ (466. 467).

Որք ուսուցանել ևս պարտէաք.
Ընդու զի չնաչն ետ.
Մինչ առնելն կամեցար.
Ես որ կապեալս եմ.
Ան որոյ և կապեալս կամ.
Զոր յօդեալ և ուսեալդ ես.
Ընդ որում և համարձակեալդ խօսիմ.
Որ արբեալդ էք.
Որ հզօրացեալն է.
Զոր խօսեալն էր.
Ընդ զի կապեալն ևս էր զնա.
Որ մեռեալն էիք.
Որ բարձեալն տանէին.
Որով մելորեալն պաշտէին.
Զոր յայտ արարեալն ասէ.
Զոր Յորն գրեալ է.
Որ ըստ Յստուածոյն հաստատեալ է.
Որ ամուրն կոչեցեալէր.
Որ ընդ նմա ի խաչն ելեալ էին.
Որ բունքն հաստատուն կացեալէին.
Որ կալոցս և մնալոցս է.
Որ նեղվելոցն է.

Որ պնդեալն եկեալն էին յօժարութեամբ .
Որ ծնեալն էջէ .
Ճատ և այն են՝ որ և ննջեցեալքն իսկ էջեն .
Որ գրոամբ ածելոցն իսկ է զմեծ վիշապն .
Որ հարկանելոցն էին գնա .
Որ նոքօքն շահելոցն էին .
Որ գալոցն էջէ ։

469 . Լ՚թէ որ նոյն վերի ասած (462) բառէրեցն յետ՝ բայեցն յառաջ մի մակբայ լինի , յոզն այն մակբայն կ՚առնի , թէ և բայն գօրութեամբ լինի .

Որ աստս կան .
Որ այժմ կեամ .
Ոչ լինէր որպէս արդս . — այս ինքն որպէս արդս լինի .
Որ վաղը եղեր մեկնեցար .
Բայց գիարդ այժմ տեսանէ՝ ոչ գիտեմք .
Որ չէդ էք սրբեալ .
Որ ոչդ հաւատաս .
Որ ոչդ երկնէիր .
Զոր ոչդ վայելէ քեզ խօսել .
Զոր աստն ետ .
Զոր անդն խոստացաւ .
Որ անդն կային .
Զոր միշտ ասէի .
Երից և տրարից որպէս միշտըն . — այս ինքն որպէս միշտն առնէի կամ արարի .
Զոր հանապազն ըմպեմք .
Որ այնպէսն գնայցեն .
Որ գՀետն երթային .
Զոր յանդիմանն տեսի .
Որ արտաքոյս եմք .
Զոյսու գոր ոչս արար .
Բարձի որ այժմդ ունի .
Որ գկնիդ գայ .
Որ մտալիւրն ճառայեաց .
Որ ստոյգն փախչէին .
Զոր ինչ մեծամեծ և ողջն ողջն կլանիցեն .
Որ ստահակն գնայցեն .
Որ հագիւն ապրեցան .
Որպէս կանխաւն ասէի .
Որ ոչն է ընդ մեզ .
Որ ոչն ունիցի .
Զոր ոչն կամիմ .
Զոր ոչն արդեօք յարոյց .
Որ ոչն անկեալ երկիր պագանիցէ .
Զինչ ոչն գիտէին .
Զի ոչն ել . Որ ոչն գոյ .
Որ ընտիրն է՝ սրբի և պատուականանայ , իսկ որ ոչն՝ այրի և հրդեհի . — այս ինքն՝ իսկ որ ոչն է ընտիր ։

470 . Յօդ առնել կարողացող դերաննից , անդիջապէս մո-

տիկ անուն բայից կամ խնդրից , դերբայից և մակբայից յետ դրած դիմաւոր բայի վերայ սովորութիւն չի յօդ դնել և ասել՝ օրինակ լինի , Զոր ես գործեմն կամ գործեմն , ընդ որս դուք զարմանայքդ , ուր Քրիստոս նստին , ինքն որ Պետրոսած էրն , որ խրատ ետն , որ յաւիտենից եմն , որ հզօրացեալ էն , որ ամուլ կոչեցեալ էրն , որ հարկանելոց էինն գնա , որ այժմ ունիդ , զոր ոչ արդեօք յարոյցն , և այլն ։

Բայեցն յառաջ յօդ առնելոյ յարմար բառ չ՚լինելոյ համար՝ կամ մի յուրիշ նկատմամբ երբեմն կ՚աստւի անսովոր ,

Զինչ խօսիսդ .
Զինչ ասէքդ .
Յորժամ թշնամի զոք ունիցիսն (527) .
Ընկեր , վասն որոյ եկիրդ .
Ընդմէմ կրից հարեբեմն .
Որոց խոնկազ արկանէքդ . — այս ինքն զխոնկազ ձեր (527) .
Որոց հանգիտապատիւ մեզ հասէքդ հաւատոց . — այս ինքն որոց հասէքդ՝ հանդի տապատիւ մեզ հաւատոց .
Տեսէք զինչ ասէրն Քրիստոս .
Որ զաստուածս անարգենն . — այս ինքն որ անարգենն զաստուածս , անորոշ մըտքով (441) .
Որ վասն քո սպանաւն .
Յորում տեղւոջ էքդ .
Զայն՝ վասն որոյ այս եղէն .
Յոր ես մտանեմն .
Զորոց դուք չարախօսէքդ ։

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ՆԱԽԴՐՆԵՐ

471 . Երբոր նոյն անունն կրկնուի (65), նախդիրն առվորաբար յառաջ ընկածի վերէն կ'դնուի .

Օայր այր իւրաքանչիւր .
Օաղգս ազգս բուսոց .
Օբարի բարին .
Օճանր ճանր օրինացն .
Օմի մի . զոմանս ոմանս .
Ի քաղաքս քաղաքս առ զօրաւար զօրավար .
Ի շաբաթու շաբաթու .
Ի տեղեաց տեղեաց .
Ընդ ժամն ժամս .
Ըստ ազգս ազգս .
Ի կեղծս կեղծս կամ կեղծս ի կեղծս .
Ի կերպս կերպս լինել կամ կերպ ի կերպս լինել .
Ետ մեզ զերկիրս զայս , երկիր՝ որ բղխէ զկաթն և զմեղր .
Տանել յեկիրն բարի զոր երդուաւ Տէր նոցա , երկիր կամ յերկիր որ բղխէ զկաթն և զմեղր :

472 . Երբոր նոյն անունն յիրուր մծտ մինն բացառական դնուի և մինն նախդրիւ տրական , նախդիրն սովորաբար երկրորդի վերէն կ'դնուի՝ որն որ լինի . Թէպէտ յառաջ դրած բացառականի վերայ ևս կարելի է դնուել .

Տանէ ի տուն կամ ի տանէ ի տուն :
Ի քաղաքէ ի քաղաք կամ ի քաղաքէ ի քաղաք :
Ի դրանէ ի դուռն կամ ի դրանէ ի դուռն :
Կրօնից ի կրօնս կամ ի կրօնից ի կրօնս :
Կենաց ի կեանս կամ ի կենաց ի կեանս :

Կենդանութենէ ի կեանս : Ընդէ մինչև յազգ :

Տուն ի տանէ , քաղաք ի քաղաքէ , տեղի ի տեղւոջէ , կողմն ի կողմանէ , ամեն յամենոյ , օր յօրէ , ամիս յամսոյ :

Երբեմն ևս միայն առաջնոյ վերջէն՝ բացառականի . Յամենոյ ամեն . ի նիւթոյ նիւթ . ի ժամանակէ ժամանակ :

473 . Երբոր նոյն նախդիրն առնելոյ շատ բառէր մինտեղ գտանուեն , նախդիրն սովորաբար բոլորի վերջէն ևս կ'կրկնուի .

Տասանորդէք գանանուխ և զսաւիթ և զչամն :
Ատանէր ի բանտ և ի կապանս և ի պատիժս :
Յարջառոյ և յիշոյ և յոչխարէ և ի հանդերձէ :
Ընդ մեծամեծս և առ իշխանս և առ նախարարս և առ գործակալս :
Ընդ ծով և ընդ ցամաք : Ընդ փոքուն և ընդ մեծին :

474 . Բայց շատ տեղ ևս առաջնոյ վերջէն միայն հերիք է , մանաւանդ երբ ևս ով կապուած լինեն .

Օարջառ և ոչխար : Օմեծս ևս փոքունս :
Ձանաչել զլայնութիւն և երկայնութիւն , խորութիւն և բարձրութիւն սիրոյն :
Վնոյն խաւար մածեալ է զոգւով և մարմնով նորա :
Յոգի և մարմին էած տրտմեալք :
Ի պակասել հանել թափել զոգիս իւրեանց :
Ի ժողովել Պաւղոսի խուխ ինչ բազում և դնել ի վերայ խարուկին :
Սպառեսցին նոքա ի սովոյ և ծարաւոյ :
Ի մեռելոց և կենդանեաց :
Ընդ հովիւն և տեսուչ հոգւոց ձերոց :
Ընդ Պետրոս և Յովհաննէս :
Ելանեմ ես առ հայրն իմ և առ հայր ձեր և Ըստուածն իմ և Ըստուածն ձեր :

Ար Աբրահամաւ և Յոբաւ և ամենայն արդարովքն :
Աստ փոքուս և մեծի :
Զարմացեալ ընդ ժուժկալութիւն համբերութեանն
կարի անհնարին և տակաւ նորա :

475 . Ինչ, այլ, ե՞ ոչ շաղկապներով կապակ բառերինն կ'կրկնուի .

Ոչ առայ կամ զաղախին . զԱստուած .
Ի հօրէ կամ՝ի մօրէ . Ոչ յերկրի , այլ յերկինս .
Յերկինս կամ յերկրի . Ի հաւատոցն Քրիստոսի .
Ոչ զմարդ անարգէ , այլ և ոչ՝ի գործոց օրինաց :

476 . Երբոր մի անուն իւրմէ յառաջ յատկացուցիչ կամ աճական ունենայ , նախդիրն կ'դնուի այն յատկացուցչի և աճականի վերայ ինչպէս ,

477 . Յատկացուցչի Վերայ նախդիր .

Ար գնորին սուսեր .
Ոչ գեցիր զիմ հանդերձս .
Գիտել զտարեաց բոլորմանն և զաստեղաց դիրս .
Վրիպեցան յԱստուծոյ գիտութենէն և՝ի նորին օրհնութենէն .
Ի հօր մերոյ ընչից .
Փրկեցաւ յառիւծուցն բերանոյ .
Վաղել հասկ յայլոց անդի .
Ոչ իմ ինչ , զքո ինչ , զտեառն ինչ .
Ոչ ոյր ինչ ուրուք և առեալ իցէ .
Ոչ որոց կերպարանս .
Յորոյ չինջանելն .
Յորոց ձ ևռաց .

478 . Աճականի վերայ նախդիր .

Ոչ մեծ Թագաւորն .
Ոչ ամենայն ճառ .
Ընդունիջիք զանթառամ փառաց պսակն . — այս ինքն զանթառամ պսակն փառաց .
Ոչ տէրունականն ասել առ նոսա քան .
Ի մեծ Թագաւորէն .
Յուղղիղ հաւատոց և՝ի սուրբ վարուց .
Ի հարազատէն իւրմէ մեռանել եղբօրէ .
Յաստուածայինն գտանեմք ասացեալ պատմութիւնս : —
Ոչ բազում տկարաց տունս խորտակեաց .
Ի տղայ մանկանցն բերանոյ զստինս՝ի բաց կորզէին . — ուր նախդիրն դրած է յատկացուցչի աճականի վերայ , և կ'իմացուի Ոչ տունս բազում տկարաց , ՝ի բերանոյ տղայ մանկանցն :

479 . Թէ որ շատ յատկացուցիչ կամ աճական յառաջ լինի , նախդիրն միայն յառաջ ընկածի վերջն դնելն բաւական է .

ՅԱստուածոյ և սրբոց ղօրութենէ .
ՅԱստուածոյ ընծորհացն ազգեցութենէ . — այս ինքն յազգեցութենէ ընծորհացն Աստուածոյ : —
Ոչ աստուածայինն սուրբս հոգին .
Ոչ մեծն և հռչակաւոր Հոմերոս .
Յայնմ մեծ տագնապի .
Ի գրահաւոր պատերազմէն պղինձապատ վահանացն .
Ի ձերոց ստոյգ և չարաթոյն բանից :

480 . Երբոր յատկացեալն յայտնի չի դնուել , կամ երբոր չի կրկնուել , նորա նախդիրն կ'դնուի կամ կ'կրկնուի յատկացուցչի վերջն՝ այն հասկացնելոյ համար , թէ որ երկու յատկացեալն և ևս ջոկ ջոկ են . ինչպէս ,

Ոչ ոք զանձին և ևթ խնդրիցէ , այլ և զընկերին . — այս ինքն զանձին իրս , զընկերին իրս :
Պիտոյ է՝ի յայլոցն ձեռնարկել . — այս ինքն՝ի յայլոց իրս : —

Օվարագոյր դրան խորանին և գդրան սրահին. — այս ինքն և գվարագոյր դրան սրահին. երկքին միև վարագոյր չէ կարելի լինել, հարկաւ զոկ են։

Խոստովան լինիցին գմեղս իւրեանց և զհարց իւրեանց. — այս ինքն և զմեղս հարց։

Մի լեցի ապրեալ՝ ինեւրքոյ երկնից տուն նորա, այլ՝ի նորայն կացցեն օտարք. — այս ինքն՝ի նորա տունն կամ տանն։

Զուկն թէպէտ և գայ յառակ, ՚ի գերեզմանի առակ գայ, և ոչ ՚ի կենդանութեան. — այս ինքն և ոչ յառակ կենդանութեան։

481. Ընդինք որ (490) բացայայտիչն հոլովով հաւաձայն կ՚լինի բացայայտելի անուանն. բայց նախդրով հոլովներին հարկ չկայ ամէն անգամ իւրն և նախդիր դնելոյ. մանաւանդ երբոր մոտիկ է։ Լաստի կ՚ասուի,

Ընդեն գՅակոբ հայրն իւրեանց.
Օհայրն մեր Ընբրահամ.
Օհայր քո Խոսրով.
Օխոսրով հայր նորա.
Օտրդատաւ արքայիւ.
Օամրոցաւն Երնջակաւ.
Ի Սիոն լեառն.
Յերուսաղէմ քաղաք.
Յերկրին Վեսեմ.
Յանկն տիեզերաց Հռոմ.
Ի Պարեհէ արքայէ.
Ի հօրէ նորա մեծէն Թէոդոսէ.
Յանմահ արքայէն Քրիստոսէ.
Ի քաղաքէն Հռոմայ.
Օնահակայ հայրապետէն.
Մինչև ցգետն մեծ Եփրատ.
Ընդ Յակոբ հայրն իւրեանց.
Ընդ ՚Ադաման որդի Նաթուէլի ասորւոյ՝ եղբայր Ռեբեկայ.
Ընդ բանաւոր աշխարհս՝ մարդս.
Կատարեաց առ մեզ օրդիս նոցա.
Ընդ Թէոդոսիւ կայսերք.
Ընդս ընտրեալս ՚ի նոցանէ առաքել, գՅուդա և զԵղիա՝ արս գլխաւորս։

482. Ընդմանապէս ասինք որ յետ դրած ածականն կ՚հա-

մաձայնուի գոյականի հետն (422). բայց նախդրով հոլովներին հարկ չկայ ամէն անգամ իւրն և նախդիր դնելոյ, մանաւանդ երբոր մոտիկ է։ Լաստի կ՚ասուի,

Օայր հաւատարիմ.
Յառնէ անիրաւէ.
Յայրի անդ կրկնուիմ.
Օպատմուճան նորա ծաղկեայ.
Օզօրութիւնս քո զոր առաբարեր մեծամեծս.
Ի սրտմտութենէ բարկութեան իւրոյ մեծէ.
Օթագաւոր ծեր և անմիտ.
Օայր շոյտ և զգոյշ.
Յերկեր բարի և պարարտ.
Ընդ սնապատն մեծ և ահագին.
Օպտիկս մեծամեծս և հզօրագոյնս.
Ընդ արս արդարս և ուղիղս.
Ի ցուպն եղեգնեայ Ջախջախեալ.
Ի մարգոյ մեղաւորէ նենգաւորէ։

Բայց թէ յետ ընկած ածականն՝ մանաւանդ հեռին՝ պիտոյ հոգ ունենայ (452), գոյականի նախդիրն սովորաբար նորա վերայ և կ՚դնի, թէ հայցականի զայ լինի (354) և թէ այլ նախդիր.

Ոչ ոք մարդկան ոչ ոք կարէ հնազանդել զչարն և գանկարգն։
Ոձևագործս իւրեանց զամենայն (355)։
Յընկերաց սրբոց հռիփսիմեանցն ՚ի ցրուելոցն։

483. Բայց երբոր այս, այք, այն, ասն, ասք, նոյն ածականքն՝ գոյականից կամ յուրիշ մի ածականից յետ դնուին, սովորաբար միշտ նոցա վերայ և կ՚դնուի գոյականի նախդիրն, մանաւանդ ը, ՚է, յ, ց նախդրներն.

Ոօրս զայս.
Ոգեղեցիկ պատմուճանս զայս.
Ի պատուիրանացս յայսցանէ.
Ոժողովուրդս քո զայս.
Ոմեծ զայս մարմինս.
Ոերկրաւոր ատորինս զայս չարութիւն.
Ոհուրդ զայդ.

Օտեսիլն գայն մեծ .
Օտեսիլն մեծ գայն .
Օդերաշխարհիկն զայն ստանախմբութիւն .
Օտեղեաւն զայնուիկ .
Օառնէն զայնմանէ .
Օտաան նկանակս զայսոսիկ .
Օաւետնայն չարխոզ զայդոսիկ .
Օաւուրան գայնոսիկ .
Օնշանս մեծամեծս զայնոսիկ .
Յաշխատիցս յայս .
Յաւուրս նեղութեան յայսմիկ .
Յերկրէս բարութեան յայսմանէ .
Յերկրիդ յայդմիկ .
Յերդմանէդ յայդմանէ .
Յերդմանէդ քումմէ յայդմանէ .
Ի տարւոջն յայնմիկ .
Ի չար հիւանդութեանն յայնմիկ .
Ի կարևորացս յայսոցիկ և այսոցիկ (127) .
Ի չարեացդ քոց յայդցանէ .
Ի քաղաքացն յայնցանէ և յայնոցիկ և այնոցիկ .
Յտեղին ցայն .
Յժողովուրդն ցայն .
Յոսկերսդ ցայդոսիկ .
Ընդ վէմն ընդ այս .
Ընդ առնս ընդ այսմիկ և ընդ վիմիս այսմիկ .
Ընդ յարկաւս ընդ այսուիկ և ընդ յարկաւս այսուիկ .
Ընդ այրդ ընդ այդ .
Ընդ աւենայն երկիրն ընդ այն .
Ընդ աւուրսն ընդ այնոսիկ .
Ըստ արձանս ըստ այս .
Ըստ ժամանակին ըստ այնմիկ և ըստ ժամանակին այնմիկ .
Օտէր գնոյն .
